Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

347.246
П-87

MAR 2010

# ՎՈՐՍԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Հաստատում եմ՝ 1932 թ. օգոստոսի 3-ին
ԽՍՀՄ՝ Արտ. Առևտրի Ժողկոմատի ԱՕՑԽՀ
Լիազոր ՍԻՎԱՃԱԳ

## ԱՕՑԽՀ ՄԵՋ ՎՈՐՍ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐՆ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

(Սահմանված են համաձայն Անդրժողկոմխորհի 1932 թ. հունվարի 23-ի վորոշման 4-րդ կետի. արձ. № 2, պարագրաֆ՝ 10.)

*Սույն կանոնները հրապարակելուց հետո — ԱՕՑԽՀ սահմաններում մինչև այժմ հրատարակված բոլոր կարգադրությունները, կանոնները և այլն, վորսի ու վորսորդական տնտեսության կարգավորելու վերաբերյալ, յեթե չեն համապատասխանում սույն կանոններին, կորցնում են իրենց ուժը:*

### 1. ՎՈՐՍ ԿԱՏԱՐԵԼԸ

1. *Վորս կատարելը համարվում է՝ ազատ վայրի գազաններ և թռչուններ ձեռք բերելը՝ հրազենի, թակարդի, ակնատի, ցանցի, վորոգայթի*

ցների ու թռչունների և բոլոր այլ միջոցների ու վորսի զենքերի ոգնությամբ:

2. ԱՍՖՈՀ վորսորդական բոլոր վայրերում, բացի մշտապես կամ ժամանակավորապես հայտարարված արգելավայրերից (заповедники, заказники), վորտեղ կենդանիների վորսը կարող է վորպես բացառություն թույլատրվել հատուկ կանոնների հիման վրա, վորս կատարելու իրավունքը պատկանում է այն անձանց, վորոնք Անդր. Առևտրի Ժողկոմատի Հանրապետական Լիազորներից համապատասխան վկայական ունեն:

3. Հատուկ վորսորդական ագարակներում (վորսորդական—արհեստագործական ընկերություններում և արտադրական—վորսորդական կայաններում) վորս կատարելու իրավունքը, հարկ եղած դեպքում սահմանելով հատուկ կանոններ ու ժամկետներ կարգավորվում է ԽՍՀՄ Արտ. Առևտրի Ժողկոմատի Լիազորության կողմից հաստատված վորսորդական տնտեսության որինակի պլանով, այդ թվում անպայման հատուկ ծանուցումներ ուղարկելու պայմանով, ծանուցումներն տարածում է Վորսորդ. Միության Վարչության և կամ այլ կազմակերպության կողմից, վորոնց կցված է տվյալ վորսորդական վայրը:

Ծանոթություն.— Ծանուցումներ ուղարկելը կարող է փոխարինվել՝ Հանրապետական պարբերական մամուլում հայտարարության տպագրությամբ, ուղարկելով թերթի օրինակը

347.246
Ո-87

ԽՍՀՄ Արտ. Առևտրի Ժողկոմատի ԱՍՖՈՀ-ի Լիազորությանը:

4. Վորս կատարելու իրավունք ունենալու վկայականը համարվում է՝ ժամկետը չկորցրած անվանական անդամագրքույկը (տոմսը), վորը պետք է գրանցված լինի ԽՍՀՄ Արտ. Առևտրի Ժողկոմատի Լիազորության Վարչության մեջ այն վորսորդական կազմակերպության կողմից, վորին պատկանում է վորսորդը. անդամագրքույկի վրա փակցված պետք է լինի պետական տուրքը վճարած լինելու դրոշմանիշը:

Ծանոթություն.— Անդամագրքույկն ուրիշ անձնավորության հանձնելն արգելվում է:

5. Վորսորդական միությունները իրենց անդամներին տրվող անդամագրքույկներում, բացի սույն կանոններից, վոր պետք է թարգմանվի համապատասխան հանրապետության պետական լեզվով, պարտավոր են նաև զետեղել այն բոլոր հատուկ վորսորդական ագարակների, արգելված վայրերի անունները, վորտեղ վորս անելն արգելված է, սահմանափակված է և կամ կարգավորվում է հատուկ կանոններով:

808 / 35607

6. Դիտական վորսորդությունը կատարվում է ԽՍՀՄ Արտ. Առևտրի Ժողկոմատի ԱՍՖՈՀ Լիազորության կողմից սահմանված հատուկ կանոններով:

7. Անտառներում (հատկապես փշատերև անտառներում) վորս անողները պարտավոր են պահպանել հրդեհային վտանգի բոլոր նախա-

16 JUL 2013
37762

զգուշական միջոցառումները և անտառից հեռանալիս վոչ մի դեպքում չպետք է թողնել վառված չհանգցրած խարույկը:

8. Մինչև վորսորդական տնտեսության կազմակերպելը, վորսորդական — արհեստագործական կենդանիները, ինչպես նաև այն օգտակար թանկարժեք և հազվագյուտ անհետացող տեսակները պահելու ու ավելացնելու նպատակով ԱՅՖՍՀ բոլոր տերիտորիաներում սահմանվում է հետևյալ, բոլոր վորսորդների համար անխտիր պարտադիր կանոնները.

## Ա. ԱՄԲՈՂՋ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐԳԵԼՎՈՒՄ Ե ՎՈՐՍԱԼ

1. Կովկասյան յեղջերուի (олень) լեռնային վոչխարների (հայկական արքալի-մուֆլոն), ինչպես և ջրաղվեսի արուները, էգերը և ձագերը:

2. Ջեյրանների, այծյամների, բոլոր տեսակի տուրերի, բեզոար քարայծերի էգերը, նրանց մինչև մի տարեկան ձագերը և լեռնայծերի ձագերը:

3. Սպիտակ արագիլ (յերկու տեսակի), տութանահավ, տուրաճ, կարապ (յերկու տեսակի), ֆլամինգո:

Ծանոթություն.— ՀՍԽՀ-ում անտառային, լեռնային հնդկահավեր, կովկասյան մայրի հավեր, ջիկ և ֆազաններ:

4. Բոլոր օգտակար վայրի թռչունները, ինչպես օրինակ՝ մեղվակեր բազեն, հարավային բազեն, բոլոր տեսակի մկնաբազեներ (բացի ճահճայիններից), մոզական ճուռակներ (Канюк-сарыч), բոլոր բուերը, բացի բուիճից:

5. Բոլոր յերգեցիկ թռչունները, բացի կեռնեխից (дрозд), փայտփորները (дятель) կկուները:

6. Բոլոր մենակ թռչող աղավնիները, բացի անտառային աղավնուց (витютень) և տատրակներից:

## Բ. ԱՄԲՈՂՋ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎՈՐՍԻ ԺԱՄԱՆԱԿ ԱՐԳԵԼՎՈՒՄ Ե

1) Եղեգներ, խոտեր այրելը և խանձ տալը:

2) Թռչունների ձվեր հավաքելը և օգտակար թռչունների բներ քանդելը:

3) Մասսայական կերպով թռչուններ և գազաններ բռնելու ձևերը (ցանցեր, դրամիչներ (кобылки) և այլն), բացի ցածում հիշված բացառություններից, ինչպես նաև ճնշող և խոշտանգող հարմարանքներ կիրառելը (հանգույցներ, ականատներ, թակարդներ, թռչնասոսինձ, փոս փորել), հարավառող միջոցները (թույն, թաղարի դրած լից հրացան) և կենդանիների անոգնական վիճակում բռնելը (դեպի թակարդ քշելը, սառած թռչուններ վորսալը, դիշերվա վորսը կրակով և այլն):

4) Վորսված կենդանիների ու թռչունների և թավամազ գազանների նոր հանված մորթիների գնելը, վաճառքն ու տեղափոխելը առանց դա-

գանների ու թռչունների վորսի ժամկետը լրանալուց 10 օր հետո:

5) Ծանքսերում, բոստաններում, այգիներում և կալվածքներին կից գտնվող հողամասերում, մինչև բերք հավաքելը (առանց տերերի թույլտվության) վորս անելը:

6) Պուրակներում, չխթա կազմած նապաստակներ և թռչուններ վորսալը:

7) Մայիսի 20-ից մինչև օգոստոսի 15-ը շներով վորս կատարելը:

8) Ավտոմեքենաների և մոտոցիկլետների վրայից վորս անելը:

9) (Գազանների) բացի վնասակար սրնդական մկներից (суслик) վորսը՝ վորջերից, փչակներից և այլն ծուխ տալու միջոցով:

(ԽՍՀՄ Արտ Առևտրի Ժողկոմատի Վորսորդ. Տնտեսության Պետտեսչության 1932 թ. սեպտեմբերի 19/23, № 80384 կարգադրությամբ):

## Գ. ՎՈՐՍԻ ԱՅԼ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Առանց հրացանի վորսի շներին և բազակներին ընտելացնելը և վորսի հետևից վազեցնելը թույլատրվում է նաև վորսն արգելված ժամանակամիջոցում, այդ նպատակի համար վորսորդների տեղական կոլեկտիվի կողմից հատկացված վայրում. շներին վարժեցնելն ու բազակներին վորսի հետևից վազեցնելուն ընտելացնելը թույլատրվում է, վոչ շուտ, քան վորսի սեզոնը սկսվելուց մեկ ամիս առաջ:



2. Յուրաքանչյուր մի վորսորդ մեկ որվա ընթացքում իրավունք ունի վորսալու՝

Ցասխան՝ 5-ից վոչ ավելի (այդ թվում 2 եգ ֆազանից վոչ ավելի):

Կաքավ և լոռամհավ՝ տասից վոչ ավելի (2 տեսակի):

Նապաստակներ՝ յերեքից վոչ ավելի:

Սմբակավոր կենդանիներից, վորոնց վորսը թույլատրվում է կրակել, բացի վարազներից, յուրաքանչյուր տեսակից մեկ գլխից վոչ ավելի:

3. Յերեք օր տևող վորսի ընթացքում վերոհիշյալ տեսակներից մաքսիմալ չափով կարելի է վերցնել մեկ որվա վորսի յեռապատիկից վոչ ավելի:

4. Խմբերով և զորախմբերով սպորտային և շուրջկալի վորսը թույլատրվում է բացառապես միայն գիշատիչ գազանների և վարազների նկատմամբ, վորոնց անկախ վորսը տևելու ժամանակամիջոցից կարելի յե սպանել 15 գլխից վոչ ավելի:

5. Վնասակար գիշատիչներ վորսալիս, ինչպես և պլանային կարգով մորթիներ մթերելիս թակարդներ և ինքնագործ թալակներ կիրառելը թույլատրվում է տեղական վորսորդական կոլեկտիվի հսկողությամբ:

6. Ինքնաձիգ գործիքների և մասսայական բռնման միջոցների կիրառմամբ այլ, բացի վերոհիշյալ հինգերորդ կետում հիշված գազանների և թռչունների վորսը կարող է թույլատր-

կից ԽՍՀՄ Մին. Սովետի ծողկոմատի տվյալ հանրապետության լիազորների կողմից բացառապես որսի համար սահմանված ժամկետում, կցված որսորդական արհեստագործական արտելություններում, արտադրական — որսորդական կայաններում և, բացի դրանից, բրիգադա ու արտել կազմած որսորդներին, յուրաքանչյուր սեզոնին առանձին կարգով: Տվյալ դեպքում թույլատրված որսի գործիքների և ձևերի մանրամասն ցուցակը կազմում է ԽՍՀՄ Մին. Սովետի ծողկոմատի ԱՄՑԽՀ Լիազորության կողմից, որս մթերող կազմակերպությունների հետ միասին:

## 2. ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ ՎՈՐՍԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

9. Վորս կատարելը թույլատրվում է հետևյալ ժամկետներում և հետևյալ տեսակի գազանների ու թռչունների նկատմամբ.

ա) օգոստոսի 15-ից մինչև դեկտեմբերի մեկը՝ արու տուրեր (յերկու տեսակի բեղսոր, քարայծեր), մրգաբավոր անտառային այծյամներ, կովկասյան մայրահավեր (тетерева) և լեռնային հնդկահավեր.

բ) օգոստոսի 15-ից մինչև ապրիլի մեկը՝ լորեր, կտցարներ (бекас), ջրակտցարներ (гаршнеп), վայրի կտցարներ (вальдшнеп) և այլ կտցարներ (куклик) սագեր, բադեր և այլ ջրաթռչուններ, ինչպես և հատկապես չհիշատակված գազաններ ու թռչուններ.



գ) օգոստոսի 15-ից մինչև հունիսի մեկը՝ ճահճային կտցարներ (дупель):

դ) սեպտեմբերի մեկից մինչև դեկտեմբերի մեկը՝ արու այծյամներ և ջեյրաններ.

յե) հոկտեմբերի մեկից մինչև հունվարի մեկը՝ վայրի խոզեր (վարազներ).

զ) հոկտեմբերի մեկից մինչև փետրվարի մեկը՝ նապաստակներ, կզաքիսներ և աղվեսներ.

է) նոյեմբերի մեկից մինչև հունվարի մեկը՝ փասիաններ.

ը) հոկտեմբերի մեկից մինչև ապրիլի մեկը՝ գորշուկներ (барсук).

թ) նոյեմբերի 15-ից մինչև մարտի մեկը՝ աղվեսներ և կզաքիսներ՝ անտառային և սպիտակակուրծք:

Ծանոթություն.— Ծակի միջոցներով (бо-бак) արու լորեր վորսալը թույլատրվում է մայիսի մեկից մինչև հունիսի մեկը:

## 3. ՎՆԱՍԱՏՈՒ ԳԻՇԱՏԻՉՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

10. Գիշատիչ և վնասակար են համարվում հետևյալ՝

1) Գազանները — վագրը, ընձը (հովազ), վայրի կատուն (անտառի և յեղեգնուտի կատուն), բորենին, գայլը, արջը, ինչպես թափառական շներն ու կատուները:

2) Թռչունները — բազեները (լորաբազե և մայրահավի բազե) որդան-սպիտակավորը, հաև-

ձայրին մինչբաղեն, բաճճը, կաչաղակը, ագռավը, ջրագռավը, ինչպես ճնճղուկները:

Ծանոթություն.— Վորսորդական վայրերում հանդիպող ցեղական վորսորդական շներին չպետք է անմիջական կերպով վոչնչացնել, այլ ցանկալի յե բռնել նրանց, պարզել, թե ո՞վ է տերը և վերջինիս պատասխանատվության յենթարկել՝ անօրինական վորսի համար:

11. Վնասակար և գիշատիչ գազաններին ու թռչուններին ամբողջ տարվա ընթացքում թույլատրվում է վոչնչացնել բոլոր միջոցներով, բացի հանրավտանգ ձևերից և թույնից, վորի կիրառումը, հարկ յեղած դեպքում գայլեր վոչնչացնելու համար թույլատրվում է միայն ԽՍՀՄ Արտ. Առևտրի Ժողկոմատի Հանրապետության Լիազորների կողմից, վորսորդների տեղական կոլեկտիվի ղեկավարությամբ ու պատասխանատվությամբ:

Ծանոթություն.— Վորսն արգելված ժամանակամիջոցում (մայիսի 20-ից մինչև օգոստոսի 15-ը) հրացանի միջոցով գիշատիչներ վոչնչացնելը թույլատրվում է միայն կազմակերպված ձևով:

12. Այգիների, բանջարանոցների և ցանքսերի տերերին թույլ է տրվում իրենց հողերի սահմաններում վոչնչացնել վնասակար գիշատիչներին բոլոր միջոցներով, բացի թույնից:

13. Վորսորդական կոլեկտիվների և առանձին



վորսորդների վրա պարտականություն է դրվում ամեն կերպ պայքարել գիշատիչների դեմ, և առաջին հերթին գայլերի ու շնագայլերի դեմ:

## 4. ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՆ ԿԵՆԴԱՆԻ ՎՈՐՍԱԼԸ

14. Վայրի կենդանիներին կենդանի վորսալը թույլատրվում է բացառապես ԽՍՀՄ Արտ. Առևտրի Ժողկոմատի ԱՍՖԽՀ Լիազորի թույլտվությամբ, նման վորսի հատուկ կանոնների հիման վրա:

## 5. ՎՈՐՍԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

15. Նպատակ ունենալով գործնականում կենսագործելու վորսի կանոնների ու ժամկետների, ինչպես նաև վորսորդական արհեստագործական ֆաունայի ու վորսորդական վայրերի պահպանման հսկողությունը, այդպիսին դնել ԽՍՀՄ Արտ. Առևտրի Ժողկոմատի Վորսորդական Տնտեսության Տեսչության և Վորսորդական Ապարատի, վորսորդական — արհեստագործական կոոպերացիայի լիազորների և անդամների, անտառային վարչության ու պահպանության, գյուղխորհուրդների, միլիցիայի, տեղական բոլոր այլ օրգանների ու միլիցիային օժանդակող ընկերության, ինչպես և վորսորդական գիտական կազմակերպությունների անդամների վրա:

Ծանոթություն 1.— Վորսորդական արհեստագործական, կոոպերատիվ և սպառողական կազմակերպությունների վրա, վորոնց յերկարատև ժամանակով հանձնված են օգտագործելու վորոշ վորսորդական վայրեր, պարտականություն է դրվում՝ կազմակերպել հատուկ վորսորդական հսկողություն, վերահիշյալ հատուկ վորսորդական վայրերում պահելու, վորս անելու կանոնները:

Ծանոթություն 2.— Վորսորդական Տնտեսության և վորսորդական կոոպերացիայի սիստեմի վրա յե դրվում վորոշ վայրերում, վորտեղ սույն կանոններով թույլատրված է մասսայական ձևերով վորս բռնելու, վորսորդական արհեստի զարգացման ու այն կյանքում կիրառելու հատուկ հսկողությունը:

16. 15-րդ կետում հիշված անձանց առաջին իսկ պահանջին յուրաքանչյուր վորսորդ պարտավոր է վորսի վայրում անմիջապես ներկայացնել իրեն անվանական վկայականը՝ վորս անելու իրավունք ունենալու վերաբերյալ և վորսորդական պայուսակը՝ ստուգելու համար կատարած վորսը: Վորսորդի կողմից այդ պահանջը չկատարելը համարվում է անօրինական վորսի կատարում (վորսագողություն) և հետապնդվում է դատական (քրեական) կարգով:

17. Վորս անելու սույն կանոնները պարտադիր են և անշեղ կերպով պետք է կիրառվեն ՌՍՖԽՀ տերիտորիայի վրա: Այս կանոնները



խախտողները կենթարկվեն քրեական պատասխանատվության տվյալ հանրապետության քրեական Որենսգրքի համապատասխան հոդվածով:

18. Այն դեպքերում, յերբ ըստ տեղական պայմանների պահանջվում է վորսորդական արհեստագործական առանձին տեսակի կենդանիների նկատմամբ ժամանակավորապես կրճատել վորսի ժամկետները, ԽՍՀՄ Արտ Առևտրի ժողկոմատի ԱՍՖԽՀ Լիազորության թույլտվությամբ, կանոնների փոփոխման նման կիրառումն իրագործում է շահագրգռված հանրապետական վորսորդական — արհեստագործական կոոպերատիվ միությունը, հայտարարելով այդ մասին թերթերում:

19. Սույն կանոնների և վորսի ժամկետների խախտումներ հայտաբերելիս այն անձինք, վորոնց վրա յե դրված նրանց պահպանման հսկողությունը (հոդ. 15) պարտավոր են՝

1) Պարզել խախտողների ինքնությունը.

2) Վերցնել նրանցից անօրինական կերպով կատարած վորսը և

3) Ըստ հնարավորության անմիջապես արձանագրություն կազմել՝ հանցավորներին քրեական պատասխանատվության յենթարկելու համար:

20. Արձանագրությունը կազմվում է վորոշված ձևով և շտապ հանձնվում է վորսորդների տեղական կոլեկտիվին, վորն այդ արձանագրությունը հետագա ընթացք է տալիս՝ դատարանում

պաշտպանում է մեղադրանքը, հետևում է դատական վճիռների կատարմանը, ինչպես նաև գրանցում է ու հաշվում առաջացող նման արձանագրությունները:

21. Անօրինական կերպով վորս կատարող անձնավորություններից, յեթե հնարավոր չէ պարզել նրանց ինքնությունը, սույն կանոնների պահպանմանը հսկող անձինք պետք է վերցնեն հրացանը և վորսի այլ գործիքները, և հանձնեն վորսորդական տեղական կոլեկտիվին՝ ի պահ մինչև նրանց ինքնությունը պարզվելն ու դատական վճիռը:

22. Վորսի կանոնները խախտողներից վերցված անօրինական վորսը պետք է վաճառվի պետական կամ կոոպերատիվ կազմակերպությունների միջոցով, իսկ անհետաձգելի դեպքերում արձանագրություն կազմողների կողմից անմիջականորեն, վորի մասին պետք է ակտ կազմվի յերկու վկաների մասնակցությամբ:

23. Բոլոր այն անձինք, վորոնք վորսի կանոնների խախտման դեպքեր են հայտաբերում, պարգևատրվում են՝ խախտողից գանձվող տուգանքի հիսուն տոկոսով և վերցված հրացանի կամ վորսի այլ գործիքների ու կատարված անօրինական վորսի հիսուն տոկոսի չափով: Թե առաջին և թե յերկրորդ գումարների մնացած հիսուն տոկոսը գնում է հօգուտ տեղական բյուջեյի: Վորսորդական կոոպերացիային արտոնյալ իրա-



վունք է վերապահվում գնելու բռնագրավված իրերը:

Ծանոթություն.— Պարգևատրման գումարների հաշվարկումը դրվում է տեղական այն վորսորդական կոլեկտիվի վրա, վորի միջոցով արձանագրությունները ուղարկվել են դատարան:

24. Մշտապես և ժամանակավորապես հայտարարված արգելավայրերի (заповедники и заказники) տերիտորիայում վորս անելը համարվում է սույն կանոնների հատուկ ծանր խախտում և ամենզացնում է Քրեական Օրենսգրքով նախատեսված պատիժը:

25. Հրացանով, վորսի գործիքներով, վորսորդական շներով և այլև հասարակական օգտագործման ճանապարհներից դուրս գտնվելը հավասարեցվում է վորս անելուն:

## 6. ՎՈՐՍՈՐԴԱԿԱՆ ԶԵՆՔԻ ՄԱՍԻՆ

26. Վորսի ժամանակ վորսորդական հրազենով կարող են օգտվել միայն այն անձինք, վորոնք վորս անելու համապատասխան վկայական ունեն:

27. Վորսորդական-հրազեն են համարվում այն զենքերը, վորոնք հատուկ վորսորդական նշանակում ունեն և բանակում գործածական չեն: Այդպիսին են համարվում՝ կապսուլային հրացանները, բյուկսֆլինտները, յեռափող հրացանները, յերկփողանի հրացանի — շտուցերի պա-

ցապուկները և հատուկ վորսորդական հրացանները։

28. Վորսի ժամանակ վորսորդական հրացան ու սառը զենք (վորսորդական դանակներ, դաշույններ) կրելու ու գործածելու համար հատուկ թույլտվություն չի պահանջվում, հարկավոր է միայն զենքը ցուցակագրել այն վորսորդական կազմակերպության մեջ, վորին պատկանում է զենքի տերը։

29. Նախորդ հոդվածից բացահանումները ու սահմանափակումները, ինչպես նաև վորսորդական զենքի ու նրա հրանյութի առևտուրն ու գործածությունը կարգավորող կանոնները հրատարակվում են Պետքաղվարչության համապատասխան օրգանների կողմից։

30. Վորսորդական արհեստակցական կոոպերատիվ միություններում ցուցակագրված վորսորդական զենքը կարող է նրա տիրոջից բռնագրավվել միայն դատարանի վորոշմամբ։

Վորսորդական Տնտեսության ավագ
տեսուչ՝ ՄԱՐԿՈՎ

## ԱՍՖՍՀ ՄԵՋ ՎՈՐՍ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

1. Առանց վճարականի վորս անելը հետապնդվում է վարչական (և վոչ թե դատական) կարգով, վորպես կանոնների խախտման առթիվ կազմած արձանագրությունները հանձնվում



են տեղական վարչական օրգանին՝ խախտողներին պատժի յենթարկելու համար։

Ծանոթություն.—Վորսի կանոնների խախտման դեպքերի հայտաբերող անձանց պարգևատրումը կատարվում է «ԱՍՖՍՀ մեջ վորս կատարելու ժամկետների ու կանոնների» 28-րդ հոդվածի կարգով։

2. Վորս կատարելու կանոնների ու ժամկետների խախտման առթիվ քրեական հետապնդումից բացի, հատուկ լուրջ դեպքերում, խախտողին կարելի յե քաղաքացիական հայց ներկայացնել՝

1) Այն կազմակերպության կողմից, վորոնց տրված են հատուկ վորսորդական վայրեր, յեթե խախտում է կատարված այդ վայրերի սահմաններում է.

2) Այլ դեպքերում՝ Անդր. Առևտրի Ժողկոմատի Լիազորության Վորսորդական Տնտեսության Տեսչության կողմից։

3. Քաղաքացիական հայցը կազմվում է՝ սպանված գազանի կամ թռչնի, վորպես ցեղական նյութի արժեքից, անօրինական վորսի հետևանքները լիկվիդացիայի յենթարկելու, դրված անօրինական վորսի արտադրանքի պահպանման և խախտողի կողմից վորսորդական տնտեսությանը պատճառած այլ վնասների արժեքից։ Քաղաքացիական հայցը ներկայացվում է հետապնդման հետ միաժամանակ, մինչև դատական քննությունը, կամ առանձին։

4. Խախտման վերաբերյալ արձանագրությունը կազմվում է հետևյալ ձևով.

1) Արձանագրությունը կազմելու տեղն ու ժամանակը:

2) Արձանագրությունը կազմողի պաշտոնը կամ այն կազմակերպության անունը, վորին անդամ է նա. արձանագրություն կազմողի ազգանունը, անունը, հայրանունը և բնակավայրը:

3) Վո՞րտեղ է և յե՞րբ է կատարվել խախտումը:

4) Ո՞ւմ կողմից և յե՞րբ է հայտաբերվել խախտումը:

5) Խախտողի ազգանունը, հայրանունը, անունը, տարիքը և սոցիալական դրությունը:

6) Վո՞ր յերրորդ անգամն է կատարված խախտումը:

7) Խախտման էությունը (հանգամանքները, ընթերականներն ու վկաները, ցույց տալով նրանց ազգանունը, անունը, հայրանունը և բնակավայրը):

8) Խախտողի կողմից արդյոք դիմադրություն ցույց չի՞ տրված և յեթե այո, ի՞նչ ձևով:

9) Անօրինական վորսի ի՞նչպիսի գործիքներ և արտադրանք է վերցված խախտողից:

Արձանագրությունը պետք է ստորագրեն այն անձինք, վորոնք ներկա յեն գտնվել արձանագրությունը կազմելիս: Վերջում պետք է ստորագրի արձանագրություն [illegible]



ՀՀ Ազգային գրադարան

Խախտողի կամ վկաների կողմից արձանագրության տակ ստորագրելուց հրաժարվելու մասին պետք է հիշատակել: Թույլատրվում է մի քանի միասին կատարված խախտումների համար կազմել մեկ արձանագրություն:

5. Այն դեպքում, յերբ կասկածի բավարար տվյալներ ու հիմք կա, թե մի վորևէ կացարանում, կամ վորևէ անձնավորության մոտ գտնվում է անօրինական վորսի արտադրանք, հետապնդման իրավունք ունեցող անձնավորությունը պահանջ է ներկայացնում՝ տալ այն արտադրանքը և վերցնում է այդպիսին: Չտալու դեպքում, նա վերցնում է հարկադիր կերպով և ընթերականների ու տվյալ կացարանը զբաղեցնողի կամ նրա տնեցիների ներկայությամբ խուզարկություն է կատարվում, պահպանելով խուզարկության սովորական կարգը:

Վորսորդական Տնտեսության ավագ
տեսուչ՝ ՄԱՐԿՈՎ

---

37.762

Պետհրատի տպարան Սրբագրիչ՝ Ն. Տոռոսյան

Գլավլիտ 9032 պատվեր 3260 տիրաժ 5000